ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Սիսավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Վեդի

«19» դեկտեմբերի 2024թ.
Ժամը՝17:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ)	**Ռ.Հակոբյան**
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	**Լ.Սեյրանյան, Ա.Մաթևոսյան**
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	**Ս.Սարոյան, Օ.Ստեփանյան**
Գնման Պատասխանատո ւ/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	**Ա. Հակոբյան**

1.Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր:
Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2.Տեղեկություններ հայտերի բացման օրվա և ժամի մասին

Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքի գնման գինը: «ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ գնման ընթացակարգ), հայտերը բացվել են 2024 թվականի դեկտեմբերի 19-ին, ժամը 17.00-ին էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am համակարգի միջոցով:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պարզաբանումների վերաբերյալ

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել,հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Սույն ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

4. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված աշխատանքի գնման գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 526-Ն որոշման 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքի համար պլանավորված/կանխատեսվող/գնման գինը / մեկ թվով արտահայտված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

5.**Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները**

Մասնակցիանվանումը	Մասնակցի հասցեն	Կապի միջոցներ էլ հասցե
«ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆ ՔՈՆՍՏՐԱԿՇՆ»ՍՊԸ և «ԲԻԴԵՔ »ՍՊԸ ՀԳ	ՀՀ ք.Երևան,Ռոստովյան 70; ՀՀ ք.Երևան,Սասունցի Դավիթ 87ա	capitalshinconstruction@gmail.com,+37493327885,+37477115522; bedeck.llc@mail.ru,info@bedeck.am +37411575522,+37498125522
«ԳԵՊՈՏԱՆԻՔ »ՍՊԸ	Ք.Երևան, Խաղաղ Դոնի 1 նրբ.7	Gepotaniq66@gmail.com 010430014, 091407104
«ԱՐԱՐԱՏՇԻՆ »ՍՊԸ	Ք.Արարատ,Շահումյան 11	araratshin@inbox.ru 091564545
«Մաքս-Վուդ» ՍՊԸ, «Լիվարդ Շին» ՍՊԸ «Արամե» ՍՊԸ	ՀՀ,ք.Երևան,Ռիգայի փ 126/4 բն 46; ՀՀ Ք.Երևան,Չարենցի 1 շենք թիվ 105 գրասենյակ; ՀՀ Ք.Երևան,Ադոնցի փողոց ,շ.6,բն 169	Maxwood-artsakh@mail.ru 08272814; livardshin@gmail.com 098880832; Arsen.sarkisyan.1988@mail.ru 097199199

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Չափաբաժին 1՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Սիսավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման աշխատանքների

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1.	«ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆ ՔՈՆՍՏՐԱԿՇՆ»ՍՊԸ և «ԲԻԴԵՔ »ՍՊԸ ՀԳ	370441940	265 833 325	53 166 665	318 999 990
2.	«ԳԵՊՈՏԱՆԻՔ ՍՊԸ	370441940	283 697 175	56 739 435	340 436 610
3	«ԱՐԱՐԱՏՇԻՆ »ՍՊԸ	370441940	284 100 000	56 820 000	340 920 000
4.	«Մաքս-Վուդ» ՍՊԸ, «Լիվարդ Շին» ՍՊԸ «Արամե» ՍՊԸ	370441940	287 400 000	57 480 000	344 880 000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

6.Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Համաձայն մրցույթի պահանջների՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ներառել են նաև հայտի ապահովում՝բանկային երաշխիքի ձևով և նշված հայտի ապահովումները մասնակիցների կողմից ներկայացվել են լուսապատճենված տարբերակով, ուստի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 526-Ն որոշման 67-րդ կետի պահանջներով դիմել էր երաշխավոր բանկերին՝ պարզելու բանկային երաշխիքների իսկությունը:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Ո Ր Ո Շ Ե Ց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 526-Ն որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետը և հրավերի 8.2-րդ կետը հայտերի գնահատումը իրականացնել գրությունների պատասխանները ստանալու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին , որը տեղի կունենա ք.Վեդի Թումանյան 6 հասցեում:

Հանձ. նախագահ՝ _____ Ռ.Հակոբյան

Անդամներ՝ _____ Ա.Մաթևոսյան

_____ Լ.Սեյրանյան

_____ Ս.Սարոյան

_____ Օ.Ստեփանյան

Քարտուղար՝ _____ Ա. Հակոբյան